

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ - 2020
9-րդ դասարան - 120 րոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Որտե՞ղ է գտնվում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի նստավայրը: *(0,5 միավոր)*

1) Անկարա	3) Ստամբուլ
2) Իզմիր	4) Ադրիանապոլիս

2. Ե՞րբ վերացվեց Գանձասարի կաթողիկոսությունը: *(0,5 միավոր)*

1) 1805 թ.	3) 1813 թ.
2) 1815 թ.	4) 1836 թ.

3. Ո՞ր տարեթիվն է համարվում մուսուլմանական թվականության սկիզբը: *(0,5 միավոր)*

1) 570 թ.	3) 622 թ.
2) 610 թ.	4) 630 թ.

4. Ե՞րբ Միսր դադարեց Կիլիկիայի հայոց կաթողիկոսական աթոռանիստ լինելուց: *(0,5 միավոր)*

1) 1915 թ.	3) 1921 թ.
2) 1918 թ.	4) 1923 թ.

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. ՀՀ ո՞ր մարզի տարածքն է ընդգրկում Գուգարքի թեմը: *(1 միավոր)*

6. Ո՞վ էր Լուսավորչի տոհմի վերջին կաթողիկոսը: *(1 միավոր)*

7. Հայոց ո՞ր կաթողիկոսի հորդորով է Մադրասում Հարություն քահանա Շնավոնյանը հրատարակել հայկական առաջին պարբերականը: *(1 միավոր)*

8. Հայկական եկեղեցապատկան հողերի և գույքի բռնագրավման օրենքի առթիվ իր դժգոհությունը Նիկոլայ II ցարին ուղղված դիմումով հայտնեց նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքը՝

(1 միավոր)

9. Ցարի կողմից «Պոլոժենիեն» հաստատվելու ժամանակ Հայոց կաթողիկոսն էր.

(1 միավոր)

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

10. Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
2. Մաշտոց Ա. Եղիվարդեցի
3. Գևորգ Բ. Գառնեցի
4. Խաչիկ Ա. Արշարունի

1	
2	
3	
4	

- ա. Նա վերականգնում է բնականոն հարաբերություններն Աղվանից կաթողիկոսության հետ. Աղվանքի նորընտիր կաթողիկոսը գալիս է Արգինա, օժվում Հայոց կաթողիկոսի կողմից՝ ընդունելով նրա գերագահությունը:
- բ. Աշոտ Ա. թագավորից հետո գահի օրինական ժառանգորդ Սմբատ արքայորդու և հայոց սպարապետ Աբասի միջև սկսվում է գահակալական պայքար, և Հայոց կաթողիկոսը ստիպված է լինում հաշտարար միջնորդի դեր կատարել:
- գ. Հայաստան ներխուժած Յուսուֆ ամիրայի հետ բանակցելու և պատերազմը կանխելու նպատակով Սմբատ Ա. մեծաքանակ նվերներով նրան ընդառաջ է ուղարկում Հայոց կաթողիկոսին:
- դ. Նրա անվան հետ է կապված Հայոց եկեղեցու ծիսական ժողովածուներից մեկը:
- ե. Նրա կարևոր ձեռնարկներից էր բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ Անտիոքում և Կիլիկիայի Տարսոն քաղաքում հայկական թեմերի ստեղծումը:

11. Համապատասխանեցնել հայոց կաթողիկոսների անունները և նրանց գահակալման տարիները.

(0,25 X 4 = 1 միավոր)

- | | |
|------------------------|--------------------|
| 1. Սիմեոն Ա. Երևանցի | ա) 1629 – 1632 թթ. |
| 2. Նահապետ Ա. Եղեսացի | բ) 1763 - 1780 թթ. |
| 3. Եղիազար Ա. Այնթապցի | գ) 1734 – 1737 թթ. |
| 4. Աբրահամ Գ. Կրեւտացի | դ) 1691- 1705 թթ. |
| | ե) 1681 – 1691 թթ. |

1	
2	
3	
4	

N 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. *Ամենայն Հայոց Հայրապետության Սուրբ Աթոռից պետք է ընտրվի մի արքեպիսկոպոս, որ մտնի ...՝ իբրև համայն եկեղեցականների փոխանորդ: Այդ եպիսկոպոսն ամեն կարգի խորհրդակցություններում պետք է համարվի որպես երկու տանուտեր, մեկը՝ հոգևոր և մեկն էլ՝ մարմնավոր:*

1. Ապագա Հայաստանի ո՞ր պետական մարմնի անդամ պետք է դառնար Մայր Աթոռից ընտրված եպիսկոպոսը: (1 միավոր)
-

2. Ո՞ր աշխատությունից է մեջբերումը: (1 միավոր)
-

13. *Գիտությամբ հռչակված այս մարդը Գանձակ քաղաքից էր, քրիստոնյա ծնողների զավակ, ովքեր նրան տվեցին Սուրբ Գրքի ուսման: ... Բազմաթիվ վարդապետների մոտ ուսանելով՝ ստացավ վարդապետական աստիճան, բայց դրանով չբավարարվելով, գնաց Կիլիկիա՝ Սև լեռ կոչված վանքը, որտեղ բազմաթիվ ուսուցիչներ ու վարդապետներ էին սպրում: Ուսումն ավարտելուց հետո նա Կայեն գավառում հիմնեց ... վանքը: Շուտով վանքը փլվեց երկրաշարժի պատճառով, և երանելի վարդապետն իր աշակերտների հետ Տանձուտի ձոր կոչված վայրում հիմնեց ... վանքը, որն անվանեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով:*

1. Ո՞ր հռչակավոր վարդապետի մասին է խոսքը: (1 միավոր)
-

2. Ո՞ր վանքը հիմնադրեց նա իր աշակերտների հետ Տանձուտի ձոր կոչված վայրում: (1 միավոր)
-

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: (0,5 միավոր)

Ս.Ներսես Ա. Մեծ, Ս. Հովսեփ Ա. Հոդոցմեցի, Ս. Գյուտ Ա. Արահեզացի, Բաբկեն Ա. Ոթմսեցի, Ներսես Բ. Բագրևանդցի

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Մատթեոս արք. Չուխաճյան, Խորեն արքեպիսկոպոս Աշրգյան, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյան, Ներսես արք. Վարժապետյան

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. *(1 միավոր)*

ա. Զաքարիա Գ., Ստեփանոս Ե. Սալմաստեցի, Դավիթ Դ. Վաղարշապատեցի, Հակոբ Դ. Ջուղայեցի

բ. Միքայել Ա. Մեքաստացի, Ստեփանոս Ե. Սալմաստեցի, Դավիթ Դ. Վաղարշապատեցի, Հակոբ Դ. Ջուղայեցի

գ. Սիմեոն Ա. Երևանցի, Կարապետ Ա. Եվդոկացի, Միքայել Ա. Մեքաստացի, Ստեփանոս Ե. Սալմաստեցի

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. *(1 միավոր)*

ա. Ներսես Ե. Աշտարակեցի, Մակար Ա. Թեղուտցի, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
բ. Ներսես Ե. Աշտարակեցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի, Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյան-Երկայնաբազուկ

գ. Ներսես Ե. Աշտարակեցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

16. Բերված մտքերից ո՞ր երկուսը Մովսես Գ. Տաթևացուն չեն վերաբերում:

(1 x 2 = 2 միավոր)

- 1) ... Հայրապետական աթոռին նստեց Աբաս Կարսեցու որդի Գագիկ շահնշահի հրամանով, որովհետև տեր Խաչիկի մահից հետո գտան, որ Սուրբ Աթոռի համար նա է արժանի:
- 2) ... Վարդապետը մեծ չարչարանքներով և շատ դրամ ծախսելով՝ մոտ հազար թուման, հազիվ կարողացավ վերացնել հարկի ծանր բեռը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:
- 3) Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիչներից, որովհետև սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների և օսմանցիների միջև, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից:
- 4) Սուրբ Հոգին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին, դրա համար էլ նա, հեզությամբ և ամենայն արդարությամբ օժտված մարդը, երկրորդ ... անունն ստացավ:

5) Սա մնաց բարձրագահ աթոռի վրա՝ Ս. Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինությամբ, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամակարգությամբ հարստացրեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ:

17. Շարադրանք

(2 միավոր)

Հայոց եկեղեցու գործունեությունը 1918 – 1920 թվականներին:

Հայոց եկեղեցու գործունեությունն անկախ պետականության կառուցման տարիներին: Եկեղեցի-պետություն «դաշնագիրը»: Ներեկեղեցական կյանքի բարենորոգության հարցը: